Հասմիկ Հովհաննիսյան
Պատմական գիտությունների թեկնածու
Հայաստանի պատմության թանգարան
hassmik@yahoo.com

Ռուբեն Վարդանյան
Պատմական գիտությունների թեկնածու
Հայաստանի պատմության թանգարան
rubenvardanyan1@gmail.com

ԹԱՆԳԱՐԱՆԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ. ԱՍԼԱՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ (1877–1955)

Հիմնաբառեր. Ասլան Շահնազարյան, դրամագիտություն, Հայաստանի պատմության թանգարան, դրամագիտության բաժին:

Ասլան Միքայելի Շահնազարյանը ծնվել է 1877 թ. հունվար 15-ին Լեռնային Ղարաբաղի Դիզակի շրջանի Քյուրաթաղ գյուղում: Միջնակարգ կրթություն ստացել է Շուշիի թեմական դպրոցում, որտեղ ուսանել է 1884–1893 թթ.: Այնուհետև, 1893 թ. ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարան, որն ավարտելուց հետո (1897 թ.) անցնում է վարժապետական աշխատանքի նախ Շուշիի թեմական դպրոցում (1897–1900 թթ.), ապա նաև Գևորգյան ճեմարանում (1900–1904 թթ.): Այդ թվերին ճեմարանում դասավանդում էին նաև Գարեգին Հովսեփյանը, Կոմիտասը, Մանուկ Աբեղյանը, Հակոբ Մանանդյանը և այլք: Ճեմարանը նոր ավարտած Շահնազարյանը, դասավանդելուց բացի, նաև Էջմիածնի մատենադարանապետն էր (Արարատ 1901, 433–434):

Շարունակելով կրթական ուղին՝ Ա. Շահնազարյանը 1904 թ. ընդունվում է Ս. Պետերբուրգի համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետ: 1908 թ. նա համալսարանին է ներկայացնում «Զաքարե և Իվանե Երկայնաբազուկների գործունեությունը» վերնագրով ատենախոսությունը, որն ակադեմիկոս Ն. Մառի կարծիքի հիման վրա պարգևատրվում է ոսկե մեդալով: Ա. Շահնազարյանը թեկնածուական ատենախուսություն է պաշտպանել նաև Սովետական շրջանում, այդ մասին տեղեկանում ենք Կ. Ղաֆադարյանի կողմից գրված թանգարանի 1946 թվականի հաշվետվությունից (Պետական պատմական թանգարանի հաշվետվություն 1946, 9):

1910 թ. Պետերբուրգի համալսարանի կողմից գործուղվում է Տաթև՝ ուսումնասիրելու այնտեղ պահվող շուրջ 300 ձեռագրերը: Նույն թվականին մեկ տարով մեկնում է Բեռլին ուսանելու, որտեղից վերադառնալով՝ շարունակում է բեղուն աշխատանքը կրթության ոլորտում: Նա 1911–1914 թթ. դասավանդել է Թիֆլիսի Ներ-

* Ստացվել է 23.01.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 13.08.2025 թ.:

սիսյան դպրոցում, 1914–1918 թթ. Շուշիի թեմական դպրոցում, իսկ 1918–1919 թթ. զբաղեցրել է Շուշիի Ղուկասյան օրիորդաց դպրոցի տնօրենի պաշտոնը:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Ա. Շահնազարյանի քաղաքական գործունեությունը, որի մասին ցավոք միայն սակավ տեղեկություններ հնարավոր եղավ հայթայթել: Հարկ է նշել, որ 1946 թ. գրած իր ինքնակենսագրության մեջ նա նշում է, որ երբեք չի անդամակցել որևէ կուսակցության (ՀՊԹ Արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 49, 13): Նա գրում է, որ ցարական Ռուսաստանի կառավարությունը 1907 թ. բանտարկում է իրեն և որպես քաղաքական հանցագործ մինչև 1910 թ. արտաքսում Գանձակից (ՀՊԹ Արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 49, 13:):[1] Իր խոսքերով պատճառը կալվածատերերի դեմ նրա պայքարն էր և գյուղացիության մեջ քարոզչություն անելը (ՀՊԹ Արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 49, 15):

1919 թ. Ղարաբաղի հայ գյուղացիության 4-րդ համագումարի կողմից Ա. Շահնազարյանն ընտրվում է Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահ: Նույն թվականին նա Բաքվի անգլիական հրամանատարության կողմից արտաքսվում է Ղարաբաղից՝ մեղադրվելով հակաանգլիական քաղաքականություն վարելու մեջ (ՀՊԹ Արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 49, 13, 15; Gharibyan 2014, 172–177): 1920 թվականին Ղարաբաղում սկսվում են ազգամիջյան կռիվներ, 7-րդ համագումարի կողմից որպես պատգամավոր նա ուղարկվում է Երևան և Թբիլիսի՝ կռիվները վերջ տալու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար: Վերադարձին Զանգեզուրում քաղաքացիական կռիվներ էին սկսվել, որի պատճառով նա 1921-ին ստիպված անցնում է Իրան, որտեղ ապաստանում է մինչև 1933 թ.: Այնտեղ նույնպես շարունակում է կրթական գործունեությունը՝ 1922-1927 թթ. Թեհրանի հայկական դպրոցի տնօրենի պաշտոնն է զբաղեցրել, 1927–1928 թթ. դասավանդել է Թեհրանի սովետական դպրոցում, 1929–1931 թթ. Նոր Ջուղայի հայկական դպրոցի տնօրենն էր: 1926 թ. Իրանում ստանում է սովետական քաղաքացիություն: 1932–1933 թթ. աշխատել է Թեհրանի սովետական առևտրական հիմնարկությունում: Շահնազարյանը, որպես Սովետական միության քաղաքացի, Իրանի կառավարության կողմից 1933 թ. արտաքսվում է երկրից: Վերադառնալով հայրենիք ընդունվում է Պատմության պետական թանգարան, որտեղ աշխատել է մինչ իր մահ՝ 1955 թ.: Նորաստեղծ թանգարանի նվիրյալ աշխատակիցը լծվում է գիտական բաժինների հիմնաքարերի մշակման գործին: Նրա առաջին գործերից էր թանգարանի շուրջ 1200 ձեռագրերի գիտական ցուցակների կազմումը (ՀՊԹ Արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 49, 12): 1933 թ. հոկտեմբերի 24-ին նա նշանակվում է թանգարանի Պատմահնագիտության սեկտորի վարիչ: Պատմության թանգարանի կազմավորման առաջին տասնամյակներին նրա կառուցվածքը մի քանի անգամ փոխվել է: Այդ կառուցվածքում մշտապես դրամագիտությունն առանձին սեկտոր է եղել, քանի որ թանգարանի հիմնադրումից մինչ օրս դրամագիտական ժողովածուն ամենամեծերից մեկն է: ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի նախագահության 1944 թ. մարտի 6-ի որոշմամբ դրամագիտության բաժնի անդրանիկ վարիչ է նշանակվում Ա. Շահնազարյանը

[1] Տեղեկությունը վերցված է Ա. Շահնազարյանի ինքնակենսագրականից, որը նա գրել է 1946 թ.-ին: Փաստաթուղթը պահվում է ՀՊԹ Արխիվում:

(ՀՊԹ Արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 49, 20)։ Դեռևս 1930-ականներին նա մեծ եռանդով նախաձեռնել էր դրամագիտական ժողովածուն համակարգելու սկզբնական բարդ աշխատանքը՝ դրամների որոշում, ցուցակագրում և գրանցում։ Թեև նա դրամագետի հատուկ մասնագիտացում չուներ, սակայն այդ դժվարին գործը հաջողությամբ իրականացրեց։ Դրան նպաստել են Շահնազարյանի ստացած բարձրագույն կրթությունը Հայաստանում և արտերկրում, ինչպես նաև այն հանգամանքը, որ տիրապետում էր բազմաթիվ լեզուների։ Հայերենից բացի, Ա. Շահնազարյանը գիտեր վրացերեն, ադրբեջաներեն, ռուսերեն, պարսկերեն, գերմաներեն, ֆրանսերեն։ Թանգարանի աշխատակիցների համար իրականացրել է գրաբարի ուսուցման դասընթացներ։ Ինչպես նա նշում է իր ձեռագրում (ձեռագիրը տե՛ս ստորև) թանգարանի գործունեության երկրորդ շրջանի ավարտին[2] այստեղ արդեն պահվում էր 12.584 մետաղադրամ (ՀՊԹ Արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 50, 17)։ Թեև հավաքածուն մեծաքանակ էր, սակայն մասնագետ չլինելու պատճառով այդ դրամները որոշված և գրանցված չէին։[3] 1936 թ. Շահնազարյանը սկսում է առանձին մատյանում (ներկայումս Դրամագիտության բաժնի մատյան) գրանցել դրամները, ինչպես նաև սկսում է այդ դրամների ընդունման ակտերը կազմել[4]։ 1949–1951 թվականների ընթացքում, երբ մետաղադրամների հավաքածուն արդեն 28.000-ից ավելի էր, նա սկսում է գրանցել դրանք նաև առանձին մատյաններում ըստ մետաղի՝ ոսկի, արծաթ, պղինձ։ Այդ շրջանում դրամները մետաղի մատյաններում գրանցվել են դասակարգված՝ ըստ այն թողարկած իշխանությունների։ 1953-ին նա կազմում է դրամագիտության բաժնի և մետաղների մատյանների համարների համեմատական մատյանը, որը մեծապես օգնում է հազարավոր դրամների մեջ կոնկրետ դրամ գտնելու աշխատանքին։ Ա. Շահնազարյանի վերջին գրանցումը դրամագիտության բաժնի մատյանում համար 17355 դրամն է։ Այդ գրանցումն արված է նրա մահից ամիսներ առաջ՝ 1954 թվականի դեկտեմբերի 10-ին։ Շահնազարյանը գրել էր նաև դրամագիտության բաժնի 1955 թ. պլանը, ըստ որի նա նախատեսում էր գրել հոդված «Մեղրի ավանի և նրա բերդի պատմաաշխարհագրական ուսումնասիրություն. գրավոր աղբյուրների հիման վրա» (4 մամուլ)։ Նոյեմբերին, Խ. Մուշեղյանի հետ միասին, պետք է կազմակերպեին դրամագիտական ցուցահանդես, որում Հայաստանի տարածքում հայտնաբերված միջնադարյան դրամների հիման վրա պետք է ներկայացվեր հայ ժողովրդի առևտրական հարաբերությունները հարևան երկրների հետ։ Ծրագրած այս գործերը նա չհասցրեց իրականացնել։

Ա. Շահնազարյանի հիմնական ավանդներից մեկը պետք է համարել դասախոսական աշխատանքը։ Հատկապես նրա ապրած ժամանակահատվածում, երբ

---

[2] Թանգարանի երկրորդ շրջանը սկսվում է 1931 թ. և տևում է մինչև 1935 թվի մայիս ամիսը (ՀՊԹ Արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 50, 11)։

[3] Մետաղադրամներից բացի դրամագիտության բաժնում են պահվում նաև տասնյակ հազարավոր թղթադրամների, նամականիշերի և մեդալների հավաքածուները։

[4] Դրամագիտական առաջին ակտը գրվել է 1936 թ. փետրվարի 8-ին։ Այն դրամագիտության բաժնի մատյանի 13523 համարն է։ Այսպիսով, Շահնազարյանի նշած շուրջ 12 հազար չկարգավորված և չգրանցված դրամների դասակարգման առաջին փուլը պետք է համարել 1936 թվականը։

նոր քաղաքական դաշտի ձևավորման ընթացքում կենսական նշանակություն ուներ մասնագետների նոր սերունդ կրթելու կարևոր գործը: Իրանից Հայաստան վերադառնալուց հետո նա, ինչպես իր կյանքի ողջ ընթացքում, շարունակել է դասավանդելը: 1934 թվականից Շահնազարյանն աշխատել է Երևանի պետական համալսարանում, Մանկավարժական ինստիտուտում, Պոլիտեխնիկական ինստիտուտում, Էջմիածնի վերաբացված ճեմարանում (1948–1949 թթ.): Նա 1938–1941 թթ. ԱրմՖԱՆ-ի[5] պատմության ինստիտուտում գիտաշխատող էր: 1940–50-ական թթ. մասնակցել է Դվինի սիստեմատիկ պեղումներին:

Մեծ է Ասլան Շահնազարյանի ներդրումը կրթության և գիտության ոլորտում, թեև նվիրյալ գիտնականի անունը հազվադեպ է հիշվում: Ինչպես բնորոշ է իր ժամանակի որոշ մեծանուն գործիչներին, նրա մասին տեղեկությունները նույնպես մասամբ են պահպանվել արխիվային հասանելի նյութերում: Բարեբախտաբար, նա չի դարձել ստալինյան բռնաճնշումների զոհ ինչպես Եվ. Բայբուրդյանը, Ժ. Գյուզալյանը, Ա. Քալանթարը և այլոք: Նրա հակիրճ ինքնակենսագրականը թույլ է տալիս պատկերացում կազմել Շահնազարյանի քաղաքական և գիտական բեղուն գործունեության մասին: Թանգարանում նրա կատարած մեծածավալ և դժվարին աշխատանքը կարելի է բացահայտել իր ձեռագրով գրված հազարավոր առարկաների գրանցումների միջոցով: ՀՊԹ-ում պահվող նրա արխիվում հայտնաբերվել է իր կողմից գրված մի ձեռագիր, որը վերնագրված է «Պատմական թանգարանի հնագիտական բաժին. (Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 20-ամյակի առթիվ պատմական ակնարկ)» (ՀՊԹ Արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 50, 1–22): Այն գրվել է 1937 թ. և ներկայացնում է թանգարանի պատմությունը՝ հիմնադրումից մինչ 1930-ականների վերջին քառորդը: 1960–1970-ական թթ. այս տեքստից օգտվել է Կ. Ղաֆադարյանը թանգարանի մասին իր հոդվածները գրելիս (Ղաֆադարյան 1962, 207–215; Ղաֆադարյան 1974, 37–47): Դրամագիտության սեկտորի ներկայիս վարիչ Ռ. Վարդանյանի նախաձեռնությամբ Շահնազարյանի ձեռագիրը համակարգչով մեքենագրվել է և կցվում է այս տեքստին: Բնագրի տեքստը վերարտադրված է անփոփոխ, պահպանված են ժամանակին բնորոշ քերականական առանձնահատկությունները՝ մի քանի աննշան շտկումներով:

Շահնազարյանն անբասիր նվիրվածությամբ մշտապես ծանրաբեռնված էր աշխատանքով, սակայն այդ աշխատանքի (թանգարանային գործ, դասավանդում) բնույթն այնպիսին է, որ դրա արդյունքները պատմության մեջ չեն մնում հեղինակի անվամբ: Ամենայն հավանականությամբ, այդ է պատճառը, որ անդադար աշխատող գիտնականի գրավոր ժառանգությունը մեծաթիվ չէ: Ա. Շահնազարյանի հեղինակած և խմբագրած աշխատանքների ցուցակը տե՛ս վերջում:

Պարկեշտ մտավորականը մահկանացուն կնքել է 1955 թ. մայիսի 17-ին Երևանում:

---

[5] Армянский филиал академии наук СССР: АрмФАН:

ՀՊԹ Արխիվ՝ ֆ.1 g. 6, գ. 50
Ասլան Շահնազարյան
(ձեռագիր)

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ
(ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Հայաստանի խորհրդայնացման առաջին տարին, 20 օգոստոսի 1921թ., հիմնվում է կուլտուր-կրթական և գիտական հաստատություններից մեկը՝ պետական թանգարանը: Չնայելով, որ ֆաշիստ և վատշվեր դաշնակ կառավարությունն ավերածության, սովի և հիվանդության էր մատնել յերկիրը, չնայելով, որ աշխատավոր ժողովուրդն արնաքամ էր յեղել և բոլորովին քայքայվել, բայց և այնպես խորհրդային իշխանությունը բարձր գնահատելով կուլտուր-կրթական և գիտական նշանակություն ունեցող հաստատության դերն աշխատավորական լայն մասսաների դաստիարակության գործում՝ անհրաժեշտ է գտնում հիմնել Հայաստանում (էջ 3) «կենտրոնական պետական թանգարան» իր անհրաժեշտ բաժիններով:

Նախախորհրդային շրջանում Հայաստանի ներկա տերիտորիայում չկար և վոչ մի թանգարան, այս բառի իսկական իմաստով, մեր յերկրում հայտնաբերված ու թանգարանային արժեք ունեցող իրերը կամ փոխադրվում էին ցարերի մայրաքաղաքները, և կամ արտահանվում էին արտասահման: Էջմիածնում պատահական յեղանակով գոյություն ուներ նյութական կուլտուրայի մնացորդների հավաքածու, վոր «թանգարան» անունն էր կրում, բայց դա շատ հեռու էր իսկական թանգարան լինելուց, վորովհետև արժեքավոր իրերի հետ այդտեղ կուտակված էյին բավական թվով միանգամայն անարժեք էքսպոնատներ, հավաքածուն չուներ մշակված կատալոգ և ցուցադրությունը զուրկ էր վորևէ սիստեմից: Այսպիսով Հայաստանի առաջին թանգարանը զուտ գիտական հիմունքներով (էջ 4) և թեմատիկ պլանով հիմնվում է միմիայն խորհրդային իշխանության հենց սկզբում:

Պետական այս առաջին թանգարանն ուներ հետևյալ բաժինները. 1) Գեղարվեստական, 2) Գրական, 3) Ազգագրական, 4) Պատմական-հնագիտական և 5) Հեղափոխական: Բացի դրանցից Գրական բաժնին կից կար թատերական և յերաժշտական յենթաբաժին և առանձին՝ ճարտարապետական յենթաբաժին: 1928թ. Հեղափոխական բաժինը զատվում և առանձին թանգարան է դառնում: Թվարկված բաժիններից երևում է, վոր թանգարանը իր սկզբնական ծրագրով պիտի ընդգրկեր մեր յերկրի թե անցյալ, և թե ժամանակակից կուլտուր-պատմական և հեղափոխական կյանքի համարյա բոլոր կողմերը: Թանգարանի համար հատկացվում է Կուլտուրայի տան վերին հարկի ամբողջ ձախ թևը, որը թեև փոքր ծավալ ուներ, բայց սկզբնական տարիների համար կարող էր բավարար լինել: (էջ 5)

Խորհրդային Հայաստանը հնությամբ, կուլտուրական ստեղծագործությունների մնացորդներով հարուստ մի երկիր է: Թանգարանի պատմա-հնագիտական բաժնի նպատակն է այդ մնացորդները կորստից փրկել, արժեքավոր էքսպոնատները հավաքել ի մի, ուսումնասիրել թեմատիկ պլանով և գեղարվեստորեն ձևավորված էքսպոզիցիաներ կազմակերպել, և աշխատավորական մասսաների լայն շրջաններին ծանոթացնել անցյալի այդ կուլտուրայի հետ: Հնագիտությունը հենց

այն գիտությունն է, վորն ուսումնասիրում է տեխնոլոգիաների պատմությունը, ձգտելով նրա բազայի վրա ցույց տալ ինչպես սոցիալական հարաբերությունների էվոլյուցիան, այնպես էլ իդեոլոգիայի էվոլյուցիան: Հնագիտական բաժինը տվյալ երկրից ձեռք բերված նյութական կուլտուրայի հիման վրա պիտի ներկայացնի մարդկային կուլտուրայի բազմակողմանի էվոլյուցիան: Այդ նպատակին է կոչված ծառայելու նաև մեր թանգարանի հնագիտական բաժինը: (էջ 5ա)

Թանգարանի պատմա-հնագիտական զարգացման պրոցեսը Հայաստանի խորհրդայնացման 17 տարիների ընթացքում կարելի է բաժանել 3 շրջանի:

***Առաջին շրջանը** սկսվում է նրա հիմնադրությունից /1921 թվին/ և տևում է մինչև 1930 թ. վերջը. Այսինքն ընդգրկում է մոտ տասը տարվա մի շրջան: Այդ շրջանն ինչպես նոր թանգարանի բոլոր բաժինների, այնպես էլ հնագիտական բաժնի համար կարելի է անվանել էքսպոնատների, կուլտուրայի մնացորդների կուտակման շրջան: Թե Միության զանազան քաղաքներից, և թե Խորհրդային Հայաստանի այլ և այլ մարզերից հնագիտական բաժնում կենտրոնացվում են մեր յերկրի անցյալին վերաբերող մի շարք էքսպոնատներ, որոնց մեջ աչքի ընկնող տեղ են բռնում Թբիլիսիի նախկին Հայոց Ազգագրական ընկերության հնագիտական և ազգագրական ժողովածուները և այդ դիսցիպլինաների վերաբերյալ մասնագիտական գրադարանը /1921–1922 թթ./, Ն. (Նոր Ռ.Վ.) Նախիջևանից (էջ 6) ստացած մի շարք թանգարանային իրեր և մասնավոր անհատներից գնած կամ նվեր ստացած էքսպոնատներ: Բացի դրանից առաջին շրջանում հնագիտական բաժինը ստանում է նաև Ն. Յ. Մառի Անիում հիմնած թանգարանից փոխադրած բավականաչափ նյութերը /1621 իր և 1803 դրամ/ և նախկին Լազարյան ճեմարանի հին դրամների կարևոր ժողովածուն /5411 հատ/: Այնպես վոր առաջին շրջանի վերջին /1930 թ./ հնագիտական բաժինն ուներ 2753 կտոր իր և 8277 հատ դրամ: Թանգարանի էքսպոնատների այդպիսի աճը թեև բավականաչափ նշանակալից էր, բայց միևնույն ժամանակ նա ուներ և իր բացասական կողմը. Այն, վոր տեղի չէր ունենում թանգարանային էքսպոնատների խիստ ընտրություն և չէր զատվում կարևորն ու անարժեքը միմյանցից: Էքսպոնատները մանրամասն մշակման չէյին յենթարկվում: Այդ թերության գլխավոր պատճառն այն էր, վոր հնագիտական բաժնում (էջ 7) կար միայն մի գիտաշխատակից, որն և բաժնի վարիչն էր: Այնպես որ, նա ժամանակի և մասնագիտության տեսակետից էլ հնարավորություն չուներ ձեռք բերած բոլոր տեսակի էքսպոնատները թանգարանային պահանջի համաձայն մշակելու և կարգավորելու:*

Հայաստանի խորհրդայնացման 5-ամյակի առթիվ, 1926 թ. նոյեմբերին, թանգարանի գեղարվեստական և գրական բաժինների հետ միաժամանակ, պատմահանգիտական բաժինն ևս իր ունեցած էքսպոնատները ցուցադրում է ազգագրական բաժնի մեր թանգարանի միջանցքում: Բայց այդ ցուցադրությունը զուրկ էր թեմատիկ պլանից և գեղարվեստական ձևավորումից. դա ավելի շատ մեխանիկական բնույթ էր կրում, չէր համապատասխանում սոցիալական վերակառուցման պահանջներին և չէր կարող բավարարել աշխատավորական մասսաներին:[6]

[6] Տեղի չէր ունենում ձեռք բերած էքսպոնատների գիտա-հետազոտական ուսումնասի-

Թանգարանը չուներ էքսպոզիցիայի համար հարմար սրահներ և կահկարասի: Չնայած այդ բոլոր բացասական հանգամանքներին, այնուամենայնիվ մասսաների առաջ Հայաստանի (էջ 8) պետական առաջին թանգարանի դռները բացվելուց անմիջապես հետո /1926 թ./ այցելուների մեծ թիվ է գրավում: Այդ այցելություններն առաջին շրջանում ըստ տարիների հետևյալ պատկերն են տալիս /թանգարանի հիմնական 5 բաժինների համար/:

	1925–26 թ.	1926–27 թ.	1927–28 թ.	1928–29 թ.	1929–30 թ.
Վճարովի	7872	6428	6397	11331	11770
Առանց վճարի	6144	5385	6446	9874	5456
Ընդամենը	14016	11813	12843	21205	17226

Առաջին շրջանի վերջին՝ 1929–1930 թ., այցելուների թիվը համեմատաբար ավելի քիչ է նախորդ տարվա այցելուների թվից: Դա բացատրվում է նրանով, վոր 1928–1929 թ. թանգարանի հիմնական բաժիններից մեկը՝ գեղարվեստականը, այդ տարին 4 նոր էքսպոզիցիա էր կազմակերպել, որոնք և մեծ թվով այցելուներ էին բերել: Մինչդեռ 1929–1930 թ. մի էքսպոզիցիա է միայն պատրաստվում:[7]

Թանգարանի հիմնական 5 բաժինների բյուջեն առաջին շրջանում հետևյալ պատկերն է ներկայացնում. (էջ 9)

1925–26 թ.	1926–27 թ.	1927–28 թ.	1928–29 թ.	1929–30 թ.
1875 ռ. 28.կ	20676 ռ. 04 կ.	24960 ռ. 27 կ.	29892 ռ. 05 կ.	28128 ռ. 34 կ.

Բյուջեի կողմից թանգարանի 5 հիմնական բաժինները զգալի աճ են ունեցել: Միայն պիտի նկատել, վոր բյուջեի կեսից ավելին գործադրվում էր աշխատավարձ վճարելու համար, իսկ էքսպոնատներ գնելու և սարքավորում պատրաստելու համար փոքր մասն էր ծախսվում: Այսպես՝ զուտ էքսպոնատներ ձեռք բերելու համար թանգարանի 5 բաժինները 1925–26 թ. ծախսել են միայն 750 ռ., 1926–27 թ. – 1000 ռ., 1928–29 թ. – 6370 ռ., իսկ 1929–30 թ., թանգարանի հեղափոխական բաժինն առանձնանալուց հետո, մյուս 4 բաժինները էքսպոնատների համար ծախսում են զգալի մի գումար՝ 10000 ռ., սակայն այդ գումարի մեծ մասը ծախսվում է գեղարվեստական բաժնի էքսպոնատների համար: Հնագիտական բաժնի ներքին ծախքը հազիվ է հասնում 500 ռ.: Պարզ է, վոր այդպիսի փոքր գումարով հնարավոր չէր կարճ ժամանակում (էջ 10) բաժինը հարստացնել նոր էքսպոնատներով և կամ այդ նպատակով գիտական էքսպոզիցիա կազմակերպել:[8]

ռություն, որի հիման վրա կարելի լիներ թե՛ այդ իրերը պահպանել, և թե՛ ցուցադրություն կազմակերպել:

7 Առաջին շրջանում թանգարանը բացվելուց հետո պատմա-հնագիտական և ազգագրական բաժնում թանգարան այցելող աշխատավորական մասսաների սպասարկումը խիստ թույլ և պատահական բնույթ էր կրում: Էքսկուրսավար չունենալու պատճառով այդ պարտականությունը յերբեմն միայն կատարում էր բաժնի վարիչը:

8 Թանգարանն իր կոչմանը ծառայեցնելու, նրան մասսայական քաղաքակրթական աշխատանքի բարձրության հասցնելու համար անհրաժեշտ է, որ նա կապված լինի համամիութենական նշանակություն ունեցող ուրիշ թանգարանների հետ, փոխանակելու միմյանց փորձառությունը, միատեղ մշակելու թանգարանային խնդիրները, օրինակ վերց-

Մի դրական քայլ, վոր այդ ուղղությամբ կատարվում է, դա այն է, որ մեր թանգարանը կոնտակտի մեջ է մտնում համամիութենական նշանակություն ունեցող Մոսկվայի և Լենինգրադի մի քանի թանգարանների, գլխավորապես՝ Լենինգրադի Էրմիտաժի, Ռուսական և Մոսկվայի Ռուսական պատմական թանգարանների հետ: Դրա շնորհիվ նա ոգտվում է վոչ միայն հիշյալ թանգարանների էքսպոնատների ցուցադրությունների ձևավորումից, այլև հնագիտական բաժինը ձեռք է բերում Էրմիտաժից մի շարք էքսպոնատների գաճից պատրաստված պատճենները, որոնք պատկերացնում են մարդու ծագումն ու տեխնիկայի էվոլյուցիան պալեոլիտի ու նեոլիտի էպոխաներում, ինչպես նաև Եգիպտոսի հին շրջանի էքսպոնատների և հունական կերամիկայի կոլլեկցիայից:

Բացի դրանից, մեր թանգարանի դիրեկցիան հարաբերության մեջ մտնելով Լենինգրադի Նյութական (էջ 11) կուլտուրայի Ակադեմիայի և Էրմիտաժի դիրեկցիաների հետ, Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 13-րդ տարեդարձի առթիվ 1930 թ. Լենինգրադ է ուղարկում Անիի էքսպոնատները ցուցադրելու Էրմիտաժում և այդ էքսպոնատների մի մասը ռեստավրացիայի յենթարկելու: Անիի բոլոր իրերը հնագիտական բաժինը հետ է ստանում 1933 թ.: Միևնույն ժամանակ, Էրմիտաժի և Բագվի թանգարանների դրամագիտական բաժինների գիտ.աշխատակիցները ոժանդակություն են ցույց տալիս մեզ՝ մշակման յենթարկելով հին դրամների մեր ժողովածուները, վորոնք որեցոր հարստանում էին Խոր. Հայաստանի զանազան մարզերում հայտնաբերված գանձերի շնորհիվ, բայց վորոնք հիմնական մշակման չէին յենթարկվում համապատասխան մասնագետ չունենալու պատճառով:

Մեր թանգարանի պատմության ***յերկրորդ շրջանը*** *սկսվում է 1931 թ. և տևում է մինչև 1935 թվի մայիս ամիսը: Էքսպոնատներով հարստանալու, էքսպոզիցիա կազմակերպելու (էջ 12) և հնագիտական բաժնի համար նոր սենյակներ ձեռք բերելու տեսակետից այդ շրջանը, և հատկապես 1931 թ., կարելի է բեկման շրջան համարել: Այդ բեկման գլխավոր պատճառ է հանդիսանում 1930 թ. դեկտեմբեր ամսին Մոսկվայում տեղի ունեցած թանգարանային համամիութենական առաջին համագումարը, վորի վորոշումներն ուժեղ խթան են հանդիսանում ուղիղ հիմքերի վրա դնելու թանգարանային գործը: Համագումարը մատնանշելով ամբողջ անցյալ շրջանի թանգարանային գործի անբավարար վիճակը՝ կոչ էր անում վճռական կերպով պայքար մղել մարքս-լենինյան մեթոդոլոգիայի հիման վրա ստեղծելու խորհրդային թանգարան: Համագումարը մշակում և գծում է ուղին՝ վերակառուցելու թանգարանները դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքներով: Նա թանգարանային աշխատակիցների ուշադրությունը կենտրոնացնում էր նաև յերկու հիմնական խնդիրների վրա՝ մասսաների կուլտուր-կրթական պահանջների սպասարկման և ձեռք բերած նյութերի գիտա-հետազոտական աշխատանքների կատարման վրա: Այդ համագումարը թանգարանային գործի բեկման այն մոմենտն է հանդիսանում, վորը սահման (էջ 13) է գծում և միասնություն ու օրինաչափություն մտցնում թանգարանների կառուցման գործում: Նա ձևակերպում է թեորետիկ*

նելու միմյանցից: Նրանք պիտի ունենան կուլտուրական աշխատանքի միասնական պլան:

հիմնական դրույթները և պարզ վորոշում քաղաքական խնդիրները, վորոնք միշտ պիտի ծառայեն խորհրդային թանգարանների շինարարությանը: Նա հատկապես շեշտում է, վոր առաջին հնգամյակում տեղի ունեցող սոցիալական շինարարության ուժեղ թափի ընթացքում թանգարանը կոչված է լինելու հեղափոխական-կուլտուրական ֆրոնտի կարևորագույն տեղամասերից մեկը: Հեղափոխական-մարքսիստական էքսպոզիցիայի և քաղլուս աշխատանքի կազմակերպության դեպքում թանգարանը կարող է և պիտի լինի կրթական և դաստիարակչական մղող միջոց ոգնելու աշխատավոր մասսաներին վոչ միայն հասկանալու աշխարհը, այլ և հեղափոխականորեն վերափոխելու այն:

Յելնելով թանգարանային առաջին համագումարի վորոշումներից՝ ՀՍԽՀ Լուսժողկոմի (էջ 14) կոլեգիան որոշում է վերակառուցման յենթարկել թանգարանային գործը: ՀՍԽՀ Լուսժողկոմին կից գիտության սեկտորը կազմում է թանգարանային աշխատակիցների առանձին հանձնաժողով, վորը մի շարք խորհրդակցություններ ունենալով՝ վորոշում է ինչպես բոլոր թանգարանների, այնպես էլ կուլտուր-պատմական թանգարանի աշխատանքների վերակառուցում կատարել մարքս-լենինյան գիտական սկզբունքների հիման վրա, գործադրելով դրա համար դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդը: Վերակառուցումը կատարել այն ուղղությամբ, վոր դա սերտ կապված լինի մեր յերկրի սոցիալական շինարարության հետ, վոր կուսակցության և կառավարության առաջադրած բոլոր պրոբլեմներն արտացոլված լինեն թանգարանի գործունեության ասպարեզում: Թանգարանը մոտեցնել մասսաներին, օժանդակել մասսաների կուլտուրական վերելքին, ուժեղացնել գիտա-հետազոտական աշխատանքը և տանել այն ուղղությամբ, վոր դրա մեջ արտացոլվեն մեր էպոխայի ակտուալ պրոբլեմները: (էջ 15)

Համամիութենական թանգարանային I-ին համագումարի վորոշումները և ՀՍԽՀ Լուսժողկոմի գիտության կոլլեգիայի ցուցումները բեկում են առաջ բերում և մեր թանգարանի ներքին կառուցվածքի, թեմատիկ պլանի և նրա աշխատանքների բնագավառներում:

Նախ և առաջ ՀՍԽՀ Լուսժողկոմատը պետական թանգարանը վերակոչում է «Կուլտուրայի պատմության թանգարան» և դա դարձնում է կենտրոնական թանգարան այն իմաստով, վոր Խոր. Հայաստանի տերիտորիայում գտնված ու թանգարանային արժեք ներկայացնող բոլոր էքսպոնատները, ինչպես նաև այլ տեղերից ձեռք բերված և ապագայում ձեռք բերվելիք կուլտուրական նշանակություն ունեցող բոլոր իրերը կենտրոնացվեն այդտեղ: Ժամանակի ընթացքում, յերբ Խոր. Հայաստանի զանազան մարզերում հիմնվեն այդ թանգարանի ֆիլիալներ, կենտրոնական թանգարանն իր ունեցած էքսպոնատներով պիտի ոժանդակե նրանց:

Յելնելով այդ տեսակետից, ՀՍԽՀ Լուսժողկոմի (էջ 16) կոլլեգիան դեռ ևս 1929թ. վորոշում է կայացնում հնագիտական ազգագրական նյութերը կենտրոնացնել՝ միատեղ ավելի լրիվ չափով էքսպոզիցիա կազմակերպելու համար: Այդ վորոշման կապակցությամբ Լուսժողկոմի կարգադրությամբ լուծարքի յէ յենթարկվում Էջմիածնի թանգարանը, որի ժողովածուից 1931թ. հնագիտական բաժինը ստանում է 872 համար իր և 2200 հին դրամ: Նույն 1931թ. հնագիտական բաժինը

Լուսժողկոմի կարգադրությամբ ստանում է նաև Հնության պահպանության կոմիտեից՝ վերջինիս գիտա.աշխատակիցների միջոցով կատարած պեղումներից և գիտարշավների ընթացքում ժողոված նյութական կուլտուրայի մնացորդներից կազմած ժողովածուն, վորը բաղկացած էր 790 համար էքսպոնատներից և 1155 հատ հին դրամից: Բացի դրանցից, յերկրորդ շրջանում հնագիտական բաժինը մասնավոր անհատներից ձեռք է բերում 706 համար իր և 952 հին դրամ: Այնպես որ, յերկրորդ շրջանի վերջին հնագիտական բաժինն ուներ արդեն էքսպոնատների (էջ 17) ստվար ժողովածու՝ բաղկացած 5121 համարներից և 12584 հատ հին դրամից: Կարելի է ասել, որ մինչև 1932թ. հնագիտական բաժինը էքսպոնատներով հարստանում էր տարերային ձևով, առանց նյութի խիստ ընտրության, վորի հետևանքով թանգարանային արժեք ներկայացնող իրերի հետ հնագիտական բաժնում հավաքվում էին նաև անարժեք, ծագման, տեղի ու ժամանակի վերաբերյալ անհայտ էքսպոնատներ, վորոնք չեյին կարող գիտական ուսումնասիրության կամ էքսպոզիցիայի առարկա լինել, և որոնք ծանրաբեռնում էին հնագիտական բաժինը: Այդպիսի մեծ քանակությամբ էքսպոնատներ գտնվում էին գլխավորապես Էջմիածնից և Հնության կոմիտեից ստացված ժողովածուների մեջ, վորոնք նույնությամբ ընդունվում էին այն ժամանակվա թանգարանի դիրեկցիայի կարգադրությամբ: Հնագիտական բաժնում այդ էքսպոնատները գիտական մշակման յենթարկելու և կարևորն ու անկարևորը միմյանցից զատելու հնարավորություն չկար այդ միջոցին, վորովհետև բաժինը վոչ (էջ 18) ազատ տարածություն ուներ դրա համար, և վոչ էլ պահանջին համապատասխան գիտ.աշխատակից: Ամբողջ բաժնում կար միայն մի գիտ.աշխատակից, վորն և բաժնի վարիչն էր: Հնագիտական բաժին մտած իրերը ֆիկսացիայի էյին յենթարկվում միայն մատյանների մեջ խիստ համառոտ նկարագրությամբ, այն էլ յերբեմն վոչ ճիշտ տեղեկություններով, քանի վոր այդ մատյանների մեջ գրանցումները կատարվում էին գործին անտեղյակ և պատահական գործավորների միջոցով: Այդ տեսակետից, մինչև յերկրորդ շրջանի վերջը, մեծ թերություններ ուներ հին դրամների պահպանության գործը: Բաժինն արդեն ձեռք էր բերել հին դրամների աչքի ընկնող մի ժողովածու (12 հազարից ավելի), բայց մասնագետ դրամագետ չունենալու պատճառով հնարավոր չէր վոչ այդ բոլոր դրամները գիտական մշակման յենթարկելու, և վոչ էլ նրա գիտական կարգավորումը կատարելու, մինչդեռ դրամների թիվն որեցոր ավելանում էր: Բուռն շինարարության հետևանքով մեր յերկրի զանազան վայրերում, և գլխավորապես Յերևանում, (էջ 19) գտնվում են աչքի ընկնող քանակությամբ գանձեր, մասնավոր անհատներից ձեռք են բերվում կարևոր դրամների ժողովածուներ: Հետևապես անհրաժեշտ էր ունենալ առանձին դրամագետ՝ այդ գործը լավ հիմքերի վրա դնելու, բայց բյուջեի պակասության պատճառով այդ թերին լրացնելու հնարավորություն չկար:

Երկրորդ շրջանում, սկսած 1932 թվից, հնագիտական բաժինը սկսում է էքսպոնատներն ընդունել միայն ընտրությամբ: Ձեռք են բերվում թանգարանային արժեք ունեցող իրեր, վորոնց տեղի, ծագման և ձեռք բերելու հանգամանքները վորոշ չափով հայտնի էյին: Դրանով վերջ է գտնում անխտիր ամեն տեսակ նյութերի կուտակումը: Այնուհետև հնագիտական բաժինը, համեմատած 1931թ. հետ,

թեև ամեն տարի քիչ թվով էքսպոնատներով է հարստանում, բայց դրա փոխարեն թանգարանում ընդունված ամեն մի իր վորոշ արժեք է ներկայացնում իբրև նյութական կուլտուրայի մնացորդ: (էջ 20)

1931թ. հնագիտական բաժինը Կուլտուրայի տան շինության աջ թևի յերկրորդ հարկում ստանում է չորս սենյակ և մի միջանցք, ուր առաջին անգամ Հայաստանի խորհրդայնացման 10-ամյակի առթիվ կազմակերպում է իր էքսպոզիցիան՝ բաղկացած երկու մասից: Առաջին մասը ներկայացնում էր մարդու ծագումը և նրա սկզբնական շրջանի աշխատանքի գործիքները, ուր ցուցադրած էքսպոնատները գաճից պատրաստված պատճեններ կամ նկարներ էին՝ ստացված Լենինգրադից: Այդ հնագույն էպոխայի վերաբերյալ Խոր. Հայաստանի տերիտորիայում ինչպես և ուրիշ շատ յերկրներում նյութական կուլտուրայի մնացորդներ դեռ չեն հայտնաբերված: Հատկապես այդ նպատակին ծառայող հետախուզում և պեղումներ էլ չեն կատարվել: Միայն 1935թ. պրոֆ. Կրաֆորդը Անգլիայից մեր թանգարանին նվեր ուղարկեց պալեոլիտի շրջանի գործիքներ, իսկ 1931թ. Արզնիի մոտ գտնվեցին նեոլիտի շրջանի աշխատանքի գործիքներ, որոնք զետեղվեցին առաջին սենյակում: (էջ 21)

Համեմատաբար ավելի հարուստ էր 2-րդ սենյակի էքսպոզիցիան, որը ներկայացնում էր Հայաստանի տոհմատիրական շրջանը, և որի բոլոր նյութերը ձեռք են բերված Հայաստանի զանազան շրջաններից: Այդտեղ ցուցադրումն այն սկզբունքով է կատարված, վոր Հայաստանի ամեն մի մարզից ձեռք բերված նյութական կուլտուրայի մնացորդները ներկայացված են ըստ մարզերի՝ հետևյալ թեմատիկ պլանով. Նախ տոհմատիրական շրջանի արտադրական միջոցների հետ կապ ունեցող իրեր, ապա կենցաղին վերաբերող և ապա կուլտի հետ կապված իրեր: Այնուհետև 2-րդ շրջանում աստիճանաբար բացվում են նաև խալդական և Հայաստանի ֆեոդալական շրջանների բաժինները: Խալդական բաժինը, վոր կարող էր ավելի հարուստ լինել խալդական արձանագրություններով, դժբախտաբար այդ պատկերը չի տալիս այն պատճառով, վոր հնագիտական բաժնի տարածության պակասության պատճառով Էջմիածնում գտնված խալդական արձանագրությունները (էջ 22) հնարավոր չեղավ փոխադրել թանգարան: Հուշարձանների պահպանության կոմիտեն այդ արձանագրությունները ցուցադրել է Հռիփսիմեյի թանգարանում: Համեմատաբար քիչ են նաև ցուցադրած Հայաստանի աքեմենյան, պարթևական, հռոմեական, սասանյան, հայ Արշակունիների և արաբական տիրապետության շրջանների վերաբերյալ էքսպոնատներ, վորոնք պիտի պատկերացնեյին Հայաստանի ֆեոդալական շրջանը: Այդ էպոխաների Հայաստանի քաղաքական, տնտեսական և առևտրական կենտրոն հանդիսացող վայրերում լայն մասշտաբով պեղումներ դեռևս չեն կատարվել, գիտական հետախուզական ուսումնասիրություններ դեռևս տեղի չեն ունեցել, որոնց հետևանքով միայն կարելի էր հայտնաբերել այդ շրջանների վերաբերյալ հարուստ նյութեր և մեր թանգարանի այդ պակասը լրացնել: Թանգարանի հնագիտական բաժինը կարող է հարստանալ գլխավորապես պլանավորված և տևական պեղումների միջոցով, և եթե այդ պեղումները կատարվեն թանգարանի անմիջական ղեկավարությամբ, նրա արտադրական պլանի համաձայն: Էքսպոնատների ձեռք բե- (էջ 22) ...

Այստեղ, ՀՊԹ Արխիվի ֆ.1 ց. 6, գ. 50 թղթապանակի 22-րդ էջով, ցավոք, ընդհատվում է Ա. Շահնազարյանի գրվածքը: Հաջորդ էջերը, որոնցում պետք է լիներ Թանգարանի երրորդ շրջանի պատմությունը, բացակայում են: 23-րդ էջից սկսվում է այլ տեքստ, ռուսերեն լեզվով (Ռ.Վ.):

Ասլան Շահնազարյանի հեղինակած եվ խմբագրած աշխատանքների ցուցակ
List of Articles and books written or edited by Aslan Shahnazaryan
Список работ, написанных и отредактированных работ Асланом Шахназаряном

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., քաղուածք «Вестник Воспитания» ամսաթերթից՝ Բանականութեան արշալոյսը. Ա) Մտքի ընթացքը, Բ) Մշտական հարցասիրութեան հասակը, *Արարատ: Ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական և բարոյական գիտելեաց ԼԶ, համար Թ–Ժ (1902)*, էջ 888–904:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., Ուսուցումը որպէս միջոց զարգացնելու ինքնուրոյն գործունէութիւն, *Արարատ: Ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական և բարոյական գիտելեաց ԼԶ, համար Բ–Գ (1903)*, էջ 190–204:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., Դաստիարակութեան խնդիրը մեր մեջ, *Արարատ: Ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական և բարոյական գիտելեաց ԼԶ, համար Բ–Գ (1903)*, էջ 252–258:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., Թէ ինչպէս պէտք է մշակուի գաղափարը բարոյական դաստիարակութեան միջոցով, *Արարատ: Ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական և բարոյական գիտելեաց, ԼԶ , համար Ե (1903)*, էջ 441–448:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., Թէ ինչպէս պէտք է մշակուի գաղափարը բարոյական դաստիարակութեան միջոցով, *Արարատ: Ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական և բարոյական գիտելեաց, ԼԶ , համար Զ (1903)*, էջ 520–526:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., Յառաջադիմութիւնը և մանկավարժութիւնը, *Արարատ: Ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական և բարոյական գիտելեաց ԼԷ , համար Ե (1904)*, էջ 432–439:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., Յառաջադիմութիւնը և մանկավարժութիւնը (շարունակութիւն), *Արարատ: Ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական և բարոյական գիտելեաց ԼԷ, համար Ժ (1904)*, էջ 862–873:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., Պրոֆ. Գրիգոր Աբրահամեան Խալաթեան, *Ազգագրական Հանդէս* 22, համար 1 (1912), էջ 249–263:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., Գարեգին եպ. Սրուանձտեանի երկերը. Գրական տեսութիւն (Մահուան քսանամեակի առիթով), *Ազգագրական Հանդէս* 25, համար 2 (1913), էջ 85–108:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., Զաքարյան (Երկայնաբազուկ) տոհմի ծագումը, գաղթը դեպի Զորագետ և նախորդները (ԺԱ–ԺԲ դար), «*Շողակաթ. Ս. Էջմիածնի» հայագիտական ժողովածու*, Վաղարշապատ (1913), էջ 66–83:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., Ֆիրդուսու «Շահնամե»-յի ձեռագրի մի որինակը, *Խորհրդային Հայաստան №120* (27.05.1934), էջ 4:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., *Մելիքի աղջիկը (պատմ. ակնարկ)*, պատմ. խմբ.՝ Վ. Պարսամյան, Կարմիր մարտիկի գրադարան №9, Երևան, Հայպետհրատ, 1944:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., Գրախոսություն՝ «Ակադ. Հ. Մանանդյան – «Տիգրան Բ. յեվ Հռոմը» (Հրատ. Արմֆանի, 1940 թ., Յերևան, 250 էջ)», *Տեղեկագիր* №1–2 (1940), էջ 200–227:

Բաղալյան Հ., Որացույցի պատմությունը, պատմ. խմբ.՝ Ա. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ, ԽՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալ, Յերևան, 1940:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., Սև ջրի (Մեծամորի) ստորին հոսանքի ուղղությունը նախկին դարերում, *Տեղեկագիր* №2 (1941), էջ 7–13:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., Բագրատունյաց նախարարական տոհմի ծագումը, *Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի*, №1, (1941), էջ 167–213:

Армения в 10 веке н. эры, [карты], сост. А. ШАХНАЗАРЯН, О. Степанян, Ереван, Армгиз, 1941:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., Դավիթ Բեկ. Հայաստանի քաղաքական վիճակը 17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին, *Սովետական գրականություն և արվեստ* (1942), №7, էջ 70–75, №8 էջ 53–57, №9–10 էջ 68–73:

Աբրահամյան Վ., *Արհեստները և համքարական կազմակերպությունները Հայաստանում 9–13-րդ դդ.*, պատ. խմբ.՝ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., ՀՍՍՌ ԳԱ, Հայաստանի պետ. պատմ. թանգարան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1946:

Ղաֆադարյան Կ., *Հովհաննավանքը և նրա արձանագրությունները*, խմբ.՝ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., Երևան 1948:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., Սիսիանի շրջանի Սառնակունք գյուղի մոտ հայտնաբերված գանձը, *Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի*, №2, (1949), էջ 7–35:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա., Արտաշատ. Պատմա-աշխարհագրական տեսություն, *Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի*, №4, (1952), էջ 150–224:

Абраам Ереванци, История войн 1721–1736 гг., Каталог документов с 1831 по настоящее время, прим. и указатель собств. имен сост. Ас. ШАХНАЗАРЯН, Акад. наук СССР, Армян. филиал, Ин-т истории и материальной культуры, предисл., Ереван, АрмФАН, 1939:

Дневник Закария Акулисского [Пер. с арм.], отв. ред. А. ШАХНАЗАРЯН, АН СССР Армянский филиал. Ин-т ист. и материальной культур,Ереван: Армфан, 1939:

ШАХНАЗАРЯН А., *Двин: Историко-географический очерк*, Ереван, 1940:

– «*Շահնազարյան Ա., Արմավիր. Պատմա-աշխարհագրական ակնարկ*» 1955 թ. հանձնված է եղել հրատարակության, սակայն նրա մահից հետո այն լույս չի տեսել:[9]

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աղբյուրներ

ՀՊԹ Արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 6, գործ 49:

ՀՊԹ Արխիվ ֆոնդ 1, ցուցակ 6, գործ 50:

Պետական պատմական թանգարանի գործունեության հաշվետվություն 1946 թ., էջ 1–10:

Աշխատություններ

Արարատ 1901 – Մայր Աթոռի ճեմարանի ԻԷ. տարեդարձին տեսչի ներկայացրած տեղեկագիրը, *Արարատ: Ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական և բարոյական գիտելեաց ԼԵ, համար Թ-Ժ*, էջ 429–437:

Ղաֆադարյան 1962 – Ղաֆադարյան Կ., Հայաստանի պետական պատմական թանգարանը, *Պատմաբանասիրական Հանդես* №2, էջ 207–215:

Ղաֆադարյան 1974 – Ղաֆադարյան Կ., Սովետական Հայաստանի առաջին թանգարանը, *Լրաբեր հասարակական գիտությունների* №12, էջ 37–47:

---

[9] Էջմիածին ամսագիր ԺԲ, համար Զ, էջ 63: Դրամագիտության բաժնի 1954 թ. հաշվետվության մեջ նշված է, որ 3,5 մամուլ հոդվածը «չի տպագրվել՝ հրատարակության համար լիմիտ չունենալու պատճառով»:

Gharibyan 2014 – Gharibyan A., *The Issue of Nagorno-Karabakh in 1918–1920 and Great Britain*, Yerevan State University, Yerevan, 2014.

Hasmik Hovhannisyan
PhD in History
History Museum of Armenia
hassmik@yahoo.com

Ruben Vardanyan
PhD in History
History Museum of Armenia
rubenvardanyan1@gmail.com

EMERITUS MEMBERS OF THE MUSEUM: ASLAN SHAHNAZARYAN

Keywords: Aslan Shahnazaryan, numismatics, History Museum of Armenia, Numismatics Department

Aslan Shahnazaryan was born in 1877 in the village of Kyuratagh, in the Dizak region of Nagorno-Karabakh.

He received his early education at the Diocesan School of Shushi, followed by studies at the Gevorkian Theological Seminary in Ejmiatsin. He later attended the Faculty of Oriental Languages at St. Petersburg University and spent a year at the University of Berlin.

After graduating, Shahnazaryan began teaching at various institutions, including the Diocesan School of Shushi, the Gevorkian Theological Seminary in Ejmiatsin, the Nersisian School in Tbilisi, the Mariam Ghukasian Girls' School in Shushi (director), the Armenian School in Tehran (director), the Soviet School in Tehran, and the Armenian School in New Julfa (director). Shahnazaryan also taught at Yerevan State University, the Pedagogical and the Polytechnic Institutes.

From 1933 until his death in 1955, A. Shahnazaryan worked at the History Museum of Armenia. From the very beginning he was appointed Head of the Historical and Archaeological Sector of the Museum. As early as the 1930s, he undertook the initial difficult task of systematizing the numismatic collection. On 6 March 1944, by the decision of the Presidium of the Academy of Sciences of the Armenian SSR, he became the head of the newly created Department of Numismatics.

Throughout his life, Shahnazaryan carried out a fruitful activity in the fields of politics, science, and education. Despite his remarkable achievements, much of his intellectual legacy has yet to be explored and published.

Асмик Оганнисян
Кандидат исторических наук
Музей истории Армении
hassmik@yahoo.com

Рубен Варданян
Кандидат исторических наук
Музей истории Армении
rubenvardanyan1@gmail.com

ЗАСЛУЖЕННЫЕ РАБОТНИКИ МУЗЕЯ: АСЛАН ШАХНАЗАРЯН

Ключевые слова: Аслан Шахназарян, нумизматика, Музей истории Армении, отдел нумизматики

Аслан Шахназарян родился в 1877 году в селе Кюратаг, в Дизакском районе Нагорного Карабаха.

Начальное образование он получил в Шушинском епархиальном училище, затем учился в Геворкской семинарии в Эджмиацине. Позже он учился на факультете восточных языков в Санкт-Петербургском университете и провел год в Берлинском университете.

После окончания университета Шахназарян начал преподавать в различных учебных заведениях, включая Шушинскую епархиальную школу, Духовную семинарию Геворгян, Армянскую духовную семинарию Нерсесян в Тбилиси, в Шушинской женской школе Мариам Гукасян (директор), Армянскую школу в Тегеране (директор), Советскую школу в Тегеране и Армянскую школу в Новой Джульфе (директор). Шахназарян также преподавал в Ереванском государственном университете, в Педагогическом и Политехническом институтах.

С 1933 года и до своей смерти в 1955 году, А. Шахназарян работал в Музее истории Армении. Он был назначен заведующим историко-археологическим сектором музея. Еще в 1930-е годы он с энтузиазмом взялся за первоначальную трудную задачу по систематизации нумизматической коллекции. Решением Президиума Академии наук Армянской ССР от 6 марта 1944 года он стал заведующим новосозданного Отдела нумизматики.

На протяжении всей своей жизни Шахназарян вел плодотворную деятельность в области политики, науки и образования. Несмотря на его выдающиеся достижения, большая часть его интеллектуального наследия еще не полностью исследована и не опубликована.